ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնք
փոստով 5.. թիվ 1, հեռ՝ 0266 ... Էլ Փոստ Koghb.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2018թ N 127 –Ա

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԲ ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑ 6, ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11-041-0184-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐՏԱԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԲԱՂԻՆՅԱՆԻՆ, ԱՍՏՂԻԿ ՀԱՅԿԱԶԻ ՄԱՄՅԱՆԻՆ, ԱՐԱՄԱՅԻՍ ԱՐՏԱԿԻ ԲԱՂԻՆՅԱՆԻՆ ԵՎ ՄԵՐԻ ԱՐՏԱԿԻ ԲԱՂԻՆԱՅՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված 2-րդ և 4-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշման 2-րդ մասի 15-րդ կետի Բ ենթակետերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինական ճանաչել Արտակ Արամայիսի Բաղինյանին /ծնվ.՝ 13.11.1967թ./, Աստղիկ Հայկազի Մամյանին /ծնվ.՝ 17.03.1966թ./, Արամայիս Արտակի Բաղինյանին /ծնվ.՝ 03.10.1991թ./ և Մերի Արտակի Բաղինայնին /ծնվ.՝ 31.01.1996թ./ պատկանող և իրենց կողմից կառուցված Կողբ համայնքի Կողբ գյուղի փողոց 6., թիվ 2 հասցեում 11-041-0184-0021 կադաստրային ծածկագրով 0,08813 հա հողամասում գտնվող (օժանդակ շինությունների՝ տաղավարները 35,58 քմ և հյուրատունը իր աստիճանավանդակով 47,08 քմ արտաքին և 37,92 քմ ներքին չափերով) ինքնակամ շինությունները և առաջնորդվելով 2006թ մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշման2-րդ մասի 15-րդ կետի բ ենթակետով՝ եթե օրինականացվող հասարակական և /կամ/ արտադրական կառույցների մակերեսը չի գերազանցում բնակելի կառույցների ընդհանուր մակերեսի 50 % և հողամասի չկառուցապատված մակերեսի 30%,ապա հողամասի

գործառնական կամ նպատակային նշանակության փոփոխությունը չի կատարվում /հողամասը նպատակային և գործառնական նշանակությունը մնում է բնակավայրերի բնակելի կառուցապատման/:

2. Օրինականացվող կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Կառուցումն իրականացրած անձիք Կողբի համայնքապետարանի 900395104111 գանձապետական հաշվին պետք է վճարեն 39.138 դրամ օժանդակ շինությունների (տաղավարների) և 51788 դրամ հյուրատան օրինականացման համար, ընդհանուր՝ 90.926 դրամ:
4. Սույն որոշման ընդունելու օրվանից հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի վաճառքի գները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Ուժը կորցրած ճանաչել Կողբ համայնքի ղեկավարի 15 նոյեմբերի 2018թ N123-Ա որոշումը
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ